

|  |                 |                    |
|--|-----------------|--------------------|
|  | Հրաման 2022/015 | Խմբագրություն 1/01 |
|--|-----------------|--------------------|

ք.Երևան

«04» մայիսի 2022թ.

**«ԻՋԻ ՓԵՅ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ «EASY WALLET» ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՈՎ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՈՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԽՐԱԽՈՒՄԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՏՎՃԱՐԻ ԱԿՑԻԱ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով, «ԻՋԻ ՓԵՅ» վճարահաշվարկային ՍՊԸ-ի կանոնադրության 8.15 կետով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. 2022 թվականի մայիսի 5-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ «Ալֆորնո» ապրանքային նշանով գործող հանրային սննդի կետերում «Easy Wallet» ապրանքային նշանով շահագործվող էլեկտրոնային դրամապանակի միջոցով վճարում կատարելու դեպքում վճարում կատարող հաշվառման հաշվի օգտատիրոջը հաշվեգրել հետվճարի գումար՝ 5 %-ի (հինգ տոկոսի) չափով:

2. Սույն հրամանի 1-ին կետի ապահովման համար սույն հրամանի հավելվածով հաստատել հրապարակային օֆերտան:

3. Սույն հրամանը գործում է գործում է մինչև դրանով սահմանված գործընթացների ամբողջական կատարումը:

Տնօրեն



Մ.Գաբրիելյան



Հավելված

«Իզի Փեյ» ՍՊԸ-ի տնօրենի 2022 թվականի մայիսի 4-ի թիվ 2022/015 հրամանի

### ՀԵՏՎՃԱՐԻ ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

- 1.1. Սույն կանոններով կարգավորվող ակցիան (այսուհետ՝ Ակցիա) «Իզի Փեյ» ՍՊԸ (այսուհետ՝ ՍՊԸ) (այսուհետ՝ ՍՊԸ) Ընկերություն) կողմից կազմակերպվող «Easy Wallet» էլեկտրոնային վճարային համակարգի (այսուհետ՝ ԷՎՀ) օգտատերերի համար անցկացվող ծրագիր է, որը նպատակ ունի խրախուսել նույնականացված օգտատերերի կողմից ԷՎՀ-ով վճարումների կատարումը և այդպիսով ընդլայնել «Easy Wallet» ԷՎՀ իրացվելիության մակարդակը և օգտատերերի շրջանակը:
- 1.2. Սույն կանոններով սահմանվում են «Easy Wallet» ԷՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, սակայն հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտ կցելու միջոցով նույնականացված, էլեկտրոնային դրամապանակի օգտատերերի «Ալֆորնո» ապրանքային նշաններով գործող հանրային սննդի կետերում ԷՎՀ-ով վճարումներ կատարելու դեքայում հետվճար ստանալու կարգը և պայմանները:
- 1.3. Ակցիայի շրջանակներում «Easy Wallet» էլեկտրոնային դրամապանակը ներբեռնած, գործարկած, անձը հաստատող փաստաթղթի կամ բանկային քարտի միջոցով նույնականացված, ցանկացած օգտատեր 2022 թվականի մայիսի 5-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ «Ալֆորնո» ապրանքային նշաններով գործող հանրային սննդի բոլոր կետերում ԷՎՀ-ի միջոցով վճարում կատարելու դեպքում կստանա հետվճարային միավորներ:
- 1.4. Սույն պայմաններով և կանոններով սահմանված հետվճարային միավորները հաշվարկվում են 1 միավոր = 1 ՀՀ դրամ սկզբունքով: Սույն կանոնների 1.3 կետում նշված ժամկետում և առևտրի կետում ԷՎՀ-ով կատարված յուրաքանչյուր վճարման դիմաց հաշվեգրվող հետվճարի գումարը կազմում է 5 % (հինգ տոկոս):
- 1.5. Սույն պայմանների և կանոնների 1.4 կետով սահմանված հետվճարային միավորները հաշվեգրվում է վճարումը կատարող օգտատիրոջ հաշվառման հաշվին՝ առցանց, սակայն ոչ ուշ քան տվյալ վճարումը կատարելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 23:59:59:
- 1.6. Սույն կանոնների 1.4 կետում նշված հետվճարը մուտքագրվում է օգտատիրոջ էլեկտրոնային դրամապանակի հաշվառման հաշվում վարվող առանձին՝ «Easy Coins» վերնագրված ենթաբաժնում, որտեղից կարող է օգտատիրոջ հայեցողությամբ փոխանցվել հաշվառման հաշվին հասանելի դրական մնացորդին՝ ԷՎՀ-ի կանոնների համաձայն:
- 1.7. Սույն կանոններով սահմանված հետվճարին վերաբերող վճարման գործարքների չեղարկման դեպքում վճարումը կատարած ԷՎՀ-ի օգտատիրոջ հաշվառման հաշվին հաշվեգրվում է գործարքի վճարման գումարի և հետվճարի գումարի դրական տարբերության չափով մասը:







- 1.8. Ակցիային կարող են մասնակցել «Easy Wallet» էՎՀ բջջային հավելվածը ներբեռնած, գործարկած, նույնականացված ցանկացած օգտատեր:
- 1.9. Ակցիայի շրջանակներում ստացած միավորները վավեր են նաև Ակցիայի ավարտից հետո:
- 1.10. Սույն կանոնները կարող են միակողմանիորեն փոփոխվել Շնկերության կողմից՝ խմբագրված տարբերակը [www.easypay.am](http://www.easypay.am) կայքում հրապարկելու միջոցով:
- 1.11. Սույն կանոնները և նկարագրված բոլոր գործողություններն ու հարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ: Կողմերի միջև առաջացող վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ կարող է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնվել իրավասու դատարանի քննությանը կամ Կողմերի միջև համապատասխան համաձայնության առկայության դեպքում՝ արտոնագրված հաշտարարի կամ արբիտրաժային տրիբունալի քննությանը:
- 1.12. Ակցիան գործում են 2022 թվականի մայիսի 5-ից մինչև հունիսի 5-ը ներառյալ: Սույն կանոնները գործում են մինչև Ակցիային վերաբերող գործընթացների ամբողջական կատարումը: